ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ

ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՀՐԱՅՐ, ԼԻԱՆՆԱ, ՔՆԱՐԻԿ, ՀԱՄԼԵՏ ՄԱՆՈՒԿՅԱՆՆԵՐԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 2 նոյեմբերի 2010թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը՝ ուսումնասիրելով քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանների անհատական դիմումով գործը քննության ընդունելու մասին հարցը, **Պ Ա Ր Զ Ե Ց.**

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանները 06.10.2010թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով քննության առնել եւ որոշել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրությանը, մասնավորապես՝ վերջինիս 1-ին հոդվածի պահանջներին։

Սահմանադրական դատարանը նշում է, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 27 եւ 28-րդ հոդվածներում նախատեսված են սահմանադրական դատարան հասցեագրված դիմումներին ներկայացվող միասնական ընդհանուր ձեւական պահանջներ, իսկ որպես անհատական դիմումի ընդունելիության հավելյալ պարտադիր պայման նույն օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ։ Մինչդեռ դիմողներն ընդհանրապես որեւէ հիմնավորում չեն ներկայացրել վիճարկվող դրույթի սահմանադրականության վերաբերյալ։

Դիմումի եւ դրան կից փաստաթղթերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողները վիճարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1226-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը, ձեւականորեն առաջ քաշելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց՝ ըստ էության բարձրացնում են այդ դրույթի կիրառման իրավաչափության խնդիրը։ Ուստի ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-

րդ հոդվածի 1-ին կետի հիմքով եւ ՀՀ սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱՈ-21 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ դիմումի քննությունը ենթակա է մերժման՝ որպես սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմում:

Սահմանադրական դատարանը գտնում է նաեւ, որ դիմումն ակնհայտ անհիմն է եւ դիմողները չեն առաջադրում դրույթի բովանդակությամբ պայմանավորված սահմանադրաիրավական վեճ:

Ելնելով վերոշարադրյալից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին կետով եւ 69-րդ հոդվածի 4-րդ եւ 7-րդ մասերով՝ ՀՀ սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

Քաղաքացիներ Հրայր, Լիաննա, Քնարիկ, Համլետ Մանուկյանների անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2 նոյեմբերի 2010 թվականի
ՍԴԱՈ-101